Յաւելուած. Սրտաբեկ նուաստ խեղճիս գործերի յիշատակութիւնը՝ ծնունդից սկսած մինչև հիջրաթի 1005 թիւը։

Վերջաբան. Ցուց. Օսմանեան ցեղի վեհափառ սուլթանների և Իրանի ու Թուրանի փադիշահների, որք նրանց ժամանակակից էին։*

Դ. Խ. Ծ. Վ.

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Անհրաժեշտ է խնամել մեկմեկու և չթողնել, որ համագիւղացիները տնտեսապէս քայքայուեն, ոչ նորա համար միայն, որ այդ պահանջում է մարդուս խիղճը կամ փոխադարձ սիրոյ գաղափարը, որ Յիսուս ինքն է աւանդել մեզ, այլ որովհետև մեր անձնական օգուտն է այդ։ Կարծում եմ որ իւրաքանչիւրի համար պարզ հասկանալի են փոխադարձ օգնութեան օգուտները։ Վեր առնենք, օրինակի համար, հարիւր տնից բաղկացած մի գիւղ. ընդունենք, որ այդ գիւղում ամբողջ տարուայ ընթացքում զանազան դժուարութիւններից տնտեսապէս քայքայուել են տասն ընտանիք. մէկի արտին կարկուտն է տուել, միւսի ունեցածը հրդեհն է լափել, երրորդը ամառնային աշխատութեանց ժամանակ հիւանդացել է, չորրորդը հասակն առած որդուն է թաղել և այլն։ Քայքայումն ի հարկէ մեկ անգամից տեղի չի ունենում. երբեմն սկըսւում է ամենաաննշան բաներից, այնպէս որ եթէ իսկոյն օգնութեան հասնենք, երբեք թշուառութիւն տեղի չի ունենայ։ Ով որ ծանօթ է մեր գիւղացոց այժմեան նիստ ու կացին, նկատած կըլինի, որ գիւղացոց մտքի մէջ դեռ մինչև այժմ փոխադարձ օգնութեան գաղափարն անգամ չի յղացած. Վնասուած և աղքատացած գիւղացիները ոչ մի տեղից օգնութիւն չստանալով, ստիպուած են դիմել մեծամեծ տոկոսներով փոխառութեան. պարտքերը վճարելու համար հարկադրուած են երկար ժամանակ շատ չնչին վարձով իբրև ծառայ աշխատել սորա կամ նորա դռանը և կամ մինչև պարտքի վճարելը ունեցած ամբողջ հողը թողնել պարտատիրոջ տրամադրութեան տակ. Պատահում է որ անասունները գոմից դուրս քշում՝ տանում են պարտքի տեղ և խեղճ գիւղացին ձեռները ծալած ստիպուած է տանը մնալ։ Ահա թէ ինչպէս է քայքայւում գիւղական ընտանեկան կացութիւնը։

Այժմ տեսնենք թէ այսպիսի աւերիչ դէպքերն ինչ ազդեցութիւն կարող են ունենալ միւս համագիւղացիների վերայ. Դուցէ մէկը կամ միւսը հարուստ է և օգտուելով այլոց թշուառ դրութիւնից, աժան գնով վեր է առել նոցա միակ յոյս և կերակրող երկու եզը կամ մի կովը և կամ չնչին տոկոսով նրանց մշակ է վարձել, երրորդը իբրև վաշխառու կրկնապատիկ տոկոսներով խաբել է նրան. Եթէ այս բոլորը լաւ աչքի առաջ ունենանք՝ կտեսնենք, որ այդպիսիների վարմունքը նոյն իսկ իւրեանց համար ձեռնտու չէ. վնասը ընդհանուր է, որին կարող է ենթակայ լինել նաև ամբողջ հասարակութիւնը. եթէ մարդիկ ժամանակին մտածեն, կտեսնեն, որ մի քանի ռուբլի գործադրելով փրկած կլինեն դժբախտներին աղքատութեան ճիրաններից. իսկ որ ամենագլխաւորն է. դորանով կատարած կլինեն աստուածային կամքը, որով նա պարտաւորեցնում է փոխադարձ կերպով օգնել իրար.

Աւելի պարզաբանենք այս. նախ և առաջ պէտք է աչքի առաջ ունենալ, որ աղքատացած, սնանկացած մարդիկ աւելի ընդունակ են շուտ փչանալու. այդպիսիները յուսահատական րոպէներին ուղղակի վնասակար և վտանգաւոր մարդիկ են դառնում համագիւղացիների համար. Շատերը, երբ տեսնում են իւրեանց ընտանիքի թշուառ կացութիւնը, յուսահատութիւնից իւրեանց վերջին կոպէկները կամ գինետուն և կամ մի այլ տեղ են տանում և փչացնում. որով և փչացնում են իրանց. Այսպիսի յուսահատութեան մէջ գինու ազդեցութեան տակ նոցանից շատերը վճռում են մի որևէ ոճիր կատարել, յարձակուել սորա կամ նորա վերայ, ով առաջին անգամ պատահի. Միթէ քիչ սպանութիւններ, գողութիւններ և հրդեհներ են տեղի ունեցել այդպիսի յուսահատուած մարդկանց ձեռքով. Միթէ այսպիսի դէպքերում տուժողները սովորաբար հարուստները չեն լինում. և դժբախտացած մարդը միթէ այդպիսիների վերայ չէ գործադրում իր մտածած չարիքը։ Ուրեմն ինչո՞ւ չպէտք է այդպիսիներին օգնել. Դժբախտութիւնից հարուած մարդը ուրիշներին էլ կարող է մոլորեցնել. նա ինքը ոչինչ կորցրած չի լինի, ընդհակառակը նորա համար անտանելի է, երբ տեսնում է ուրիշի տան մէջ կանոնաւորութիւն, կարգ ու սարք, նա չի կարող հանգիստ սրտով տանել այս ամէնը, ուստի և աշխատում է հրապուրել մարդկանց դէպի մոլութիւն—գինետուն ևլն։ Յիմար և կամքից թոյլ մարդիկ իսկոյն շեղւում են իւրեանց նախկին ճանապարհից, որը և ի հարկէ իւրեանց վերայ աժան չի նստում.

Դժբախտացած գիւղացիների հասցրած երկրորդ վնասներից մէկն էլ այն է, որ նոքա պատճառ են դառնում գիւղական զանազան արտահանւող

---

* Բովանդակութեան այս թարգմանութիւնը կատարեց երիտասարդ գիտնական Մեծ. պ. Հրաչեայ Աճառեանը։

իրերի գնի ցածանալուն և ներածուողների բարձրանալուն։ Եթէ նրանց համար հարկ լինի վարձել կամ գնել մի որևէ բան։ վճարքի համար պէտք է ժամանակ ինդրեն՝ ապագայում աւելի մեծ գին վճարել խոստանալով։ Ահա այսպիսով կրպակներում ծախուողառարկաների գները բարձրանում են։ ընդհակառակը գիւղացոց ծախած ապրանքների և օրավարձի գները ընկնում են։ Օրինակի համար։ եթէ մի որևէ շրջանում մշակի օրավարձն է ութսուն կոպէկ։ այդպիսի թշուառացած մարդիկ թէ իւրեանց և թէ իւրեանց ընտանիքները քաղցած չըթողնելու համար ինքեանում են այդ գինը 60 մինչև անգամ և 50 կոպէկ։ գուցէ դեռ մի բան էլ պակաս։ որից յետոյ նախկինը վերականգնել արդէն դժուար է։ Նոյնը պատահում է նաև հացահատիկների։ խոտի։ անասունների և վերջապէս այն ամէնի հետ։ ինչ որ գիւղացիք վաճառքի են հանում։ Եթէ լաւ կշռադատենք։ կտեսնենք։ որ այդպիսի հանգամանքներում հասարակութեան ամէն մի անդամի վնասը խիստ զգալի է լինում։ երբեմն մինչև անգամ աշխատանքի և եկամուտի երրորդ մասը կորչում է։ Եւ որքան հարուստ լինի գիւղացին։ այնքան աւելի մեծ է լինում նորա վնասը։ որովհետև վաճառքի հանելու աւելի ապրանք կունենայ։

Անկեալների պատճառած երրորդ վնասն էլ այն է։ որ ժամանակի ընթացքում նոցա ընտանիքների վերայ հաւաքուում են պետական զանազան անվճար մնացած տուրքեր։ ինչ որ բացարձակապէս վնասակար է հասարակութեան միւս անդամների համար։ որովհետև վերջ ի վերջոյ նրանք ստիպուած պէտք է լինեն վճարել այդ անվճար տուրքերը։ Թշուառը կորցնելով իւր հաշիւները։ պարտքերի պատճառաւ կորցրել է նաև իւր մայր հողը։ անասունները. և եթէ նա վկայութիւնից ենթակայ է եղել արբեցողութեան և այսպիսով անուշադիր է թողել իւր ընտանիքը։ շատ պարզ է որ հասարակութիւնը ինքը պարտաւոր է խնամել նորա թշուառացրած ընտանիքին։ Հետևապէս։ ով որ թոյլ է տալիս իւր համագիւղացուն ենթակայ լինելու յետին աստիճան աղքատութեան։ նա այդպիսով իւր վերայ աւելորդ կոռուբեգեար է գնում։ Գուցէ այս բոլորը աննկատելի է հասարակութեան համար։ գուցէ գիւղացիները հեռուն չեն մտածում։ աչքի առաջ չեն ունենում վերահաս վտանգը։ բայց հաւատացած թող լինեն։ որ անկեալին օգնելը պահանջում է նոյն իսկ իւրեանց անձնական շահը։ Վերջապէս պէտք է հաշուի առնել նաև մի ուրիշ հանգամանք։ Ցնտեսապէս քայքայուած գիւղացիք ամէն ժամանակ պարտական կմնան ոչ միայն իւրեանց համագիւղացիներից շատերին։ այլ նաև խանութպաններին։ Առևտրական մարդիկ երբեք իւրեանց կոպէկները չեն կորցնում։ հէնց որ նկատում են նրանք։ թէ իւրեանց առնելիքներից մի քանիսը հնար չկայ ստանալու։ բարդում են իրանց վաճառած ապրանքների գնի վերայ։ պարտաճանաչ և փութաջան գիւղացիները գնելով այդ թանկացրած ապրանքները՝ անկատելի կերպով տուժում են ծոյլ և անուշադիր գիւղացիների փոխարէն։

Այո՛։ այսպիսի հանգամանքներում փութաջան և ապահովուած գիւղացիների վնասը մեծ է։ փորձուած մարդիկ ընդունում են։ որ գիւղացոց եկամուտները անպատճառ մի որոշ չափով կաւելանան։ եթէ գիւղում թշուառացած ընտանիքներ գոյութիւն չունենան։ եթէ նոքա ապրանքների գնի անկման պատճառ չդառնան։ եթէ ինքեանք կարողանան վճարել իւրեանց պարտքը և մարդկանց չըմոլորեցնեն արբեցողութեամբ։ Արբեցողութեան հետևանքն է ոճրագործութիւն և անհանգիստ կենցաղավարութիւն։ որ հետզհետէ տարածուելով ամբողջ հասարակութեան մէջ։ պատճառ է դառնում որ մինչև անգամ իւրեանց գործը լաւ ճանաչող գիւղացիք կամ դատարաններում քարշ գան և կամ ինքեանք ենթակայ լինին այդ կործանիչ մոլութեան։

Այս բոլորից յետոյ։ ի հարկէ։ նոքա իրաւունք չունին ոչ ոքից գանգատուելու։ իրանք են մեղաւոր։ որ թոյլ են տուել իւրեանց համագիւղացիներին ենթակայ լինելու այդ աստիճան թշուառութեան։ մինչդեռ ընդհանուր ոյժերով կարելի էր շատ հեշտութեամբ դորա առաջն առնել։ Ժամանակին մի քանի կոպէկներ ծախսել զլացան։ ուստի և ստիպուած են այժմ զգալի վնասներ կրել։

Առհասարակ ամենայն չարիք։ որ տեղի է ունենում գիւղերում շնորհիւ առանձին ընտանիքների անտեսապէս քայքայման։ պէտք է աստուածային պատիժ համարել։ ճշմարտութիւն է սա։ որովհետև եթէ մէկը չի խղճում իւր մերձաւորին։ չի էլ կարող երջանիկ կեանք վարել։ Արդեօք ամէնի համար ցանկալի չէ՞։ որ մարդ օրինաւոր և աստուածահաճոյ կեանք վարէ։ թոյլ չտայ որ կորչի իւր համագիւղացին։ Սրանով նա կատարած կլինի այլոց վերաբերմամբ իւր ունեցած քրիստոնէական պարտքը։ Այն բոլոր միջոցները։ որոնցով կարելի էր շատ արժան կերպով աղատուել այդպիսի խոշոր դժբախտութիւններից։ թերևս քսան անգամ արժան լինէին։ քան այն վնասները։ որոնց մասին մենք վերևը խօսել ենք։

Այժմ խօսենք այդ միջոցների մասին։

Շատ երկրներում։ ուր այժմ գիւղացիները երջանիկ կեանք են վարում։ հաւանական է առաջ վատ կեանք վարած լինէին։ Անպատճառ նոցա մէջ ևս տեղի էին ունենում ամէն տեսակ դժբախտ հանգամանքներ։ Եւ որովհետև նոցա համար ծանր

անտանելի էր այդ կեանքը, ուստի և սկսեցին զանազան հնարքներ մտածել՝ դպրոցներ և հասարակական ընթերցարաններ բաց արին, ամէն կերպ աշխատեցին լուսաւորել իւրեանց մտքերը և գրքերի մէջ որոնել իւրեանց համար օգտակար խորհուրդներ։ Այդպիսով գրագէտների և կրթուած մարդկանց թիւը քանի գնում աւելանում էր. մի որևէ նոր բանի ձեռնարկելը շատ հեշտացաւ, որովհետև լուսաւորուած մարդիկ սովորաբար աւելի համարձակ և ձեռնարկող են լինում։ Փչացան նաև երկպառակութիւնները և վերջապէս հասկացան մարդիկ թէ ճշմարիտ և առաքինի կեանքը, ոչ թէ անընդհատ կռիւների և վէճերի, այլ համաձայնութեան և սիրոյ մէջ է կայանում։ Լուսաւորելով իւրեանց մտքերը՝ մարդիկ գտան փոխադարձ պաշտպանութեան այնպիսի միջոցներ, որոնք իրանց էլ առանձին ծանրութիւն չէին տալիս։

Այդ միջոցներից գլխաւորը փոխադարձ օգնութեան մի ընկերութիւն հիմնելու գաղափարն էր, որ արծարծուելով նախ կրթուածների շրջանում, վերջապէս իրականութիւն ստացաւ։

Ասենք մի քանի խօսք այդ ընկերութեան և նորա գործունէութեան մասին։

Նախ և առաջ մի որևէ համայնքի մի քանի անդամներ իրանց մէջ համաձայնութիւն են կայացնում հիմնելու մի այդպիսի ընկերութիւն, որի համար և իշխանութիւնից թոյլտուութիւն են խնդրում։ Ով որ կամենայ, կարող է յիշեալ ընկերութեան անդամ գրուել. միայն վատ մարդկանց թոյլ չեն տայ մասնակցելու, որպէս զի ընկերութեան գործը համակամ կերպով յառաջ ընթանայ։ Եւ երբ որոշ չափով, օրինակի համար 100 հոգի, ընկերութեան անդամ գրուեցին, այն ժամանակ ընկերութիւնը կազմում է իրա համար մի կանոնադրութիւն։

Եթէ նոցանից մէկին մի որևէ ընտանեկան կամ ուրիշ դժբախտութիւն պատահի, օրինակի համար հրդեհ, կամ կարկուտը փչացնէ հացարոյսերը, կամ ընտանի անասունները հիւանդութիւնից սկսեն սատակել, կամ մի որևէ անյաջողութեան մէջ ընկնի, այդպիսի հանգամանքներում հարկաւոր է պաշտպանութիւն։ Իսկոյն ընկերութեան բոլոր անդամները վճարում են իրեանց պարտաւորեցուցիչ անդամավճարը, օրինակի համար 30 կոպ., որը և յանձնուում է մնասուղին կանոնաւորելու համար իւր քայքայած անտեսութիւնը։ Բայց հաւաքած փողի իւրաքանչիւր մանէթից տաստաս կոպ. վեր են առնում կազմելու մի պահեստի գումար։ Ասենք, եթէ պայմանավճարը 30 կոպ. է, և անդամների թիւը 100, օժանդակութեան կարօտ անձը կարող է ստանալ 27 ռ. իսկ 3 ռ. դնում են խնայողական դանձարանը։

Կարծում եմ, որ իւրաքանչիւրի համար 30-ական կոպ. վճարը մի ծանր բան չէ, իսկ 27 ռուբլին այս կամ այն պատահարից թշուառացած ընտանիքի համար մի բաւականին խոշոր գումար է։ Դժբախտութիւնից անմիջապէս յետոյ մի այդպիսի օգնութիւն ստանալը գիւղացու համար մեծ բան է. նա դրանով կարող է միջոց ունենալ եթէ ոչ ամբողջապէս, գէթ մասամբ վերականգնելու իւր քայքայուած նիւթական վիճակը։

Յամենայն դէպս, եթէ անդամները պարտաւորուած լինէին ստէպ վճարելու 30 կոպ. կարծում եմ զգալի կլինէր ամէնի համար։ Ահա այդ պատճառաւ էլ կանոնագրութեան մէջ յիշւում է, որ պարտաւորեցուցիչ վճարը կարելի է հաւաքել ամսական մի անգամ, հետևապէս և տարեկան տասն երկու անգամից ոչ աւելի, այլ կերպ ասած իւրաքանչիւր անդամ պարտաւորուած կլինի տարեկան վճարել 3 ռ. 60 կոպ.։ Փորձերից երևում է, որ 100 տան մէջ դժբախտութեանց խոշոր դէպքեր կարող են տեղի ունենալ 12 անգամից ոչ աւելի, ուստի — ինը այդպիսի դէպքերը ամենամեծ թիւն են կազմում։ Փոքրիկ դժբախտութեանց դէպքերը կարող են շատ տեղի ունենալ, բայց այն ժամանակ օգնութիւնն ևս փոքր չափով կլինի։ Եթէ մի ամբողջ ամսուայ ընթացքում դժբախտութեանց խոշոր դէպքերի փոխարէն երեք թեթև դէպքեր տեղի ունենան, պէտք է հաւաքել ամբողջ վճարը և բաժանել երեքի մէջ կամ հաւասարապէս և կամ վնասի մեծութեան համեմատութեամբ։

Յիշեալ ընկերութիւնը ունի առանձին վարչութիւն, որը և որոշում է վճարը և նպաստ տալիս այս կամ այն պատահարից վնասուողներին։ Վարչութիւնը կազմուած է լինում նախագահից, մի քանի անդամներից և գրագրից։ Նոցա ընտրում է անդամներից բաղկացած ընդհանուր ժողովը իւր միջից։ Սովորաբար նախագահ է ընտրւում լաւ և կրթուած մի մարդ, օրինակի համար քահանայ, ուսուցիչ, և կամ մի որևէ դիրք ունեցող անձ։ Դժուար թէ ընտրուածներից մէկը հրաժարուի, որովհետև գործը սուրբ է և աստուածահաճոյ։ Ընկերութեան համար կարևոր է նախագահական պաշտօնի մէջ ունենալ կրթուած և ծանրաբարոյ մէկին, որպէս զի կարևոր գործերում իւր հմուտ և խելացի խորհուրդներով կարողանայ օգնել ժողովրդին։ Գրագիր կարող է լինել ամենայն մի գրագէտ և հաշուագէտ անձն։

Նորա գործն է ամբողջ ընկերութեան եկամուտի հաշիւը պահել։ Սովորաբար անդամ նշանակում են ծանրաբարոյ, անաչառ և անկողմնապահ ծերերից։ Վարչութեան պարտքն է ամենայն ինչ բարեխիղճ կերպով կշռադատել, չմերժել վնասուողներին ու թշուառացածներին, և առանց մերժելու և տեղեկանալու՝ ամէն պատահած մարդու օգնութիւն չհասցնել։ Վարչութեան գլխաւոր

պարտքն է ընկերութեան մէջ համերաշխութիւն սերմանել. պահեստի դրամագլուխը խնայողական դրամարկղի մէջ պահել և կարևոր դէպքերում ընդհանուր ժողովի հրաւիրել ընկերութեան բոլոր անդամներին.

Պահեստի դրամագլուխը գործադրւում է միայն ընդհանուր աղէտի ժամանակ. Օրինակի համար՝ մի որևէ պատճառով անբերրիութիւն է յառաջացել, որից վնասուել են ընկերութեան բոլոր անդամները. այսպիսի հանգամանքներում արդէն պարտաւորեցուցիչ վճարներով միայն չի կարելի պաշտպանել մէկմէկու, որովհետև կարիքը մեծ է և ընդհանուր. Պէտք է գործադրել պահեստի գումարը, որը թէև կոպէկներով՝ բայց տարեց տարի մեծանալով, կարող է բաւականին մեծ գումար կազմել. այսպէս. օրինակ, հարիւր անդամ ունեցող ընկերութեան պահեստի գումարը քսան տարուայ ընթացքում կարող է հասնել մինչև հազար ռուբլու. Մի այդպիսի գումարով կարելի է անբերրի տարիներում համարձակ կերպով օգնել մինչև անգամ մի ամբողջ հասարակութեան՝ այն պայմանով, որ ծախսած պահեստի գումարը բերրի տարիներում նորից հաւաքուի և թող չտրուի կորչելու. Դրամագլուխը պահպանելով, ժամանակի ընթացքում աւելի և աւելի կաճի, և այնքան կըմեծանայ, որ կարելի կլինի, բացի հազուագիւտ դէպքերից, դադարեցնել պարտաւորեցուցիչ անդամավճարը և պահեստի դրամագլխի տոկոսներով կարիք ունեցողներին նպաստ տալ.

Լաւ կլինի ընկերութեան անդամների թիւը սահմանափակել և եթէ այդ հարիւրից անցնի, կարելի է անդամավճարը պակասացնել.

Այժմ տեսնենք, թէ որքան մեծ են այդպիսի ընկերութեան տուած օգուտները. Երբև օրինակ վերցնենք դարձեալ հարիւր տնից բաղկացած մի գիւղ, ուր մի տարուայ ընթացքում զանազան պատահարներից թշուառացել են տասն ընտանիք. Վերևում մենք տեսանք, որ տասը տան տնտեսական քայքայումը յառաջ է բերում արտահանուող ապրանքների գնի անկումն և ընդհակառակը, ներմուծուող ապրանքների թանկութիւն. Տեսանք նոյնպէս, որ այդպիսի պայմանում աւելանում են ոճիրները, դժուարին է լինում հարկերի և կոռուբեգևարների վճարումը և անթիւ ու անհամար վնասներ են յառաջ գալիս. Մինչդեռ եթէ այդ միևնոյն գիւղում փոխադարձ օգնող ընկերութիւն հիմնուած լինէր, իւրաքանչիւր անդամ ամբողջ տարուայ ընթացքում երեք ռուբ. անդամավճար տալով, պաշտպանած կլինէր տասն ընտանիքի քայքայուութեան դառնապարտուելուց, ինքն էլ ազատուած կլինէր այդպիսի քայքայուած ընտանիքների պատճառով յառաջացած զանազան վնասակար պատահարներից և կատարած կլինէր քրիստոնէական մի մեծ գործ։

Յիշեալ ընկերութեան մասնակցելու համար նախ և առաջ իւրաքանչիւրից երդումով պահանջւում է կանոնադրութեան մէջ ցոյց տուած յօդուածները սրբութեամբ իրագործել. բացի այդ նաև երկիւղած կեանք վարել և այդ աստուածահաճոյ ընկերութեան մէջ վէճերի և կռիւների տեղիք չտալ, օգնել կարիք ունեցող գիւղացիներին, չհարբել, ինչպէս և ուրիշ հարբեցողներին արգիլել. Ի հաստատութիւն այս բոլորի, անդամները առաջին ընդհանուր ժողովում երդւում ու համբուրում են ս. Խաչը. Ապագայում, եթէ մէկը երդմնազանց գտնուի, եթէ սրբութեամբ չպահէ իւր տուած խոստումը, նախատինքով կհեռացուի ընկերութիւնից. Այսպիսի դէպքեր հազուադէպ են և այս շատ պարզ է, որովհետև երդմնազանց գտնուող և ընկերութիւնից արձակած անդամը կարող չէ այնուհետև այդ շրջանում խաղաղ և անդորր կեանք վարել. Այդպիսին փողոց անգամ չի կարող դուրս գալ. ամէն ոք կկտրէ իւր յարաբերութիւնը այդպիսիների հետ. Նա կը հալածուի ամենքից, և նորան կը մնայ միայն հեռանալ գիւղից, որով և կատարուած կլինի ընկերութեան միակ ցանկութիւնը։ Այդպիսով ուրեմն ընկերութիւնը ոչ միայն հասած կլինի մարդկանց կարիքներին, այլ և սովորեցրած կլինի ժուժկալ և բարի լինել. իսկ այս արդէն բոլորի համար ամէն բանից թանկ է. Սովորաբար կարգ ու կանոնի ենթարկած գիւղի բընակիչները հեռու են արբեցողութիւնից, նոցա մէջ աւելի են նիւթական քայքայման դէպքեր և գիւղականների կեանքը աւելի ապահովուած է լինում. Այդպիսիները ամէն կերպ կաշխատեն լուսաւորել իւրեանց մտքերը. իսկ լուսաւորուած մարդը հեշտութեամբ կարող է գտնել իւր համար մի որևէ շահաւէտ և ձեռնտու պարապմունք. Հետևապէս լուսաւորութիւնն ևս մի հարստութիւն է գիւղացոց համար և այն էլ շատ մեծ ու որոշ մարդկանց համար. Ուրեմն լուսաւորութիւնն ևս ինքնօգնութեան համար մի անհրաժեշտ բան է, որի համար և ընկերութիւնները ամէն կերպ աշխատում են ուսում և կրթութիւն տարածել իւրեանց անդամների շրջանում։

Պէտք է աշխատել ընկերութեան ունեցած գումարներից բաժին հանել գրքեր և լրագրեր ստանալու համար. Փոքրիկ գումարով կարելի է գնել բաւականին թուով ժողովրդական գրքեր և երկու երեք անհրաժեշտ և կարևոր լրագրեր, որոնցով անդամները կզբաղուեն իւրեանց պարապ ժամերին. Եւ որովհետև ընկերութիւնը հիմնուել է փոխադարձ օգնութեան համար, ուստի և չպէտք է ամէն մի պատահական բան բերել տալ. թէ գրքերը և թէ լրագրերը պէտք է լինեն հրահանգիչ և բովանդակեն զանազան օգտակար և նպատակայարմար տեղեկութիւններ, ինչպէս օրինակ՝ գիւղատնտե-

սական, կրօնական, արհեստագիտական, բարոյական, առողջապահական և վերջապէս այնպիսիները, որոնց մէջ նկարագրուած լինեն զանազան երկրների բնակիչների նիստ ու կացը, արդիւնաբերութիւնը և այն։ Ժամանակի ընթացքում ընկերութեան մօտ կհաւաքուին բաւական թուով գրքեր, որոնք ոչ միայն կլուսաւորեն մասնակցող անդամների մտքերը, այլ նաև շատերի համար պատճառ կդառնան կանոնաւորելու իւրեանց քայքայուած տնտեսական գործերը։ Օրինակի համար, եթէ մէկը կարդում է աւելի լաւ եղանակով դաշտեր մշակելու մասին մի որևէ յօդուած, այդպիսին բացի նրանից, որ կաշխատի գործադրել և օգտուել ընկերներին ևս կաշխատի սովորեցնել նոյնը։ Մի ուրիշը ծանօթանում է գրքերից ընտանի անասուններ կամ թռչուններ բազմացնելու մի որևէ օգտակար եղանակի հետ և ապա գործադրելով, լաւ փող է աշխատում։ Երրորդը՝ գրքերի շնորհիւ մտածում է պարապ ժամերը անցկացնելու մի որևէ եղանակ գտնել, որտեղ կարելի է լաւ գործ ձեռք բերել։ և կամ՝ թէ ինչպէս պէտք է այս կամ այն դժբախտութեան առաջն առնել և այն։

Սովորաբար լրագրեր կարդալու համար պէտք է յատուկ մի ընթերցարան հիմնել, իսկ եթէ քիչ լրագրեր է ստացուում, որի համար աւելորդ է համարում մի առանձին սենեակ զբաղեցնել, այն ժամանակ, նայած յարմարութեան, լաւ կլինի դպրոցը և կամ անդամներից մէկի խրճիթը յարմար ժամերում ծառայեցնել այդ նպատակին։ Որոշեալ ժամանակ կարելի է հաւաքուել և միջներից աւելի կրթուածը ի լուր ամենեցուն կկարդայ և կբացատրէ կարևոր կէտերը։

Փոխադարձ օգնող ընկերութեանց մեծ օգուտներից մէկն էլ երևան կարող է գալ մեծ գումարով մի որևէ բան գնելիս։ Այդպիսի զգալի խոշոր ծախքեր կարող են լինել գարնանը և ամառը, երբ սովորաբար գիւղացոց ձեռքում փող չէ լինում։ Այսպիսի հանգամանքներում գիւղացիք ժամանակ են խնդրում ծախողից մինչև աշունն և կամ պարտք վերցնում քաղաքի մի որևէ հարուստից։ Խոշոր գումարի կարիք ունեցող գիւղացին թէև կարող է հաւատարիմ լինել, բայց շատ անգամ անծանօթ լինելով քաղաքացուն, չի կարողանում ստանալ իւր անհրաժեշտ գումարը։ Հէնց սոյնանմանն և այլ հանգամանքներում հաւատարիմ մարդուն ամէն ժամանակ կարող է երաշխաւոր լինել վերև յիշուած ընկերութիւնը, որը անկարող լինելով իւր միջոցներով մի այդպիսի նպաստ հասցնել իւր անդամին, հեշտութեամբ կարող է ձեռք բերել ուրիշից։ Օգնութիւն կարող է ստանալ ամէն մի անդամ, եթէ այդպիսին ճանաչուած է իրրև հաւատարիմ, փութաջան մարդ, և արժանացել է համագիւղացիների վստահութեանը։

Սակաւ օգտակար չեն կարող լինել փոխադարձ ընկերութիւնները նաև հացահատիկներ, ընտանի անասուններ, խոտ, փայտ և առհասարակ գիւղից արտահանուող նիւթեր վաճառելիս։ Գիւղացիք սովոր են իւրեանց ունեցածները վաճառքի հանել առանձին և համաձայնուել շուկայի և կամ գնողի առաջարկած նոյն իսկ ամենաշնչին գներին. կարիքը ստիպում է նրան շուտով կիսագնի ծախել իւր ապրանքը։ Թէև նրան շատ լաւ յայտնի է, որ ուրիշ քաղաքներում նոյն ապրանքները աւելի թանկ գին ունեն. նա անկարող է սպասով այդ բանը հեռաւոր երկրներ տանել։ Ժամանակ շատ է հարկաւոր։ Այսպիսի դէպքերում ահա՝ երբ գիւղում կազմակերպուած կայ փոխադարձ ընկերութիւն, ծախուելիք իրերի հետ կարելի է այլ կերպ վարուել։ Հացահատիկներ ծախելու ժամանակ ընկերութեան բոլոր անդամները կարող են միասին և ընդհանուր համաձայնութեամբ գործել։ Նոքա բոլոր իւրեանց ունեցած հացահատիկները կարող են տանել երկաթուղու կայարանը, այնտեղ մի կամ մի քանի վագոններ վարձել, իւրանց անդամներից մէկին կամ երկուսին յանձնել հաւաքած բեռը տանելու այս կամ այն քաղաքը։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այսպիսի դէպքերում գիւղացու օգուտը աւելի մեծ կլինի։

Աւելի օգտակար է ամբողջ հասարակութեան համար, երբ միասին վաճառքի են հանում ընտանի անասուններ։ Դորա համար պէտք է ամառը ամէն ոք աշխատի լաւ կերակրել ծախուելու անասունները, ապա աշնանը հաւաքել ուղարկելու, ուր հարկաւոր է։

Նորվեգիայում, որտեղ առանձնապէս լաւ հիմունքների վերայ են դրուած գիւղական փոխադարձ օգնող ընկերութիւնները, բացի վերոյիշեալ միջոցներից ձեռնարկել են նաև շատ ուրիշ օգտաւէտ գործեր։ Ընկերութիւնը իւր ունեցած պահեստի դրամագլուխը, որը ինչպէս վերևն ասացինք, քսան տարուայ ընթացքում կարող է հազար բուրլու հասնել, ծառայեցնում է խրթև հիմնական դրամագլուխ գիւղական նոր բայուելիք բանկի։ Հազար բուրլին իրրև մի հիմնական դրամագլուխ, բաւական է։ մանաւանդ եթէ դրա վերայ աւելացնենք նաև ընկերութեան բոլոր անդամների երաշխաւորութիւնը, որոնք երդուել են ամէն կերպ նպաստել այդ օգտակար հաստատութեան։ Բանկի հաստատած օգուտներից ամենամեծը կարելի է համարել գիւղերում արմատացած և գիւղացիների թշուառութեան գլխաւոր պատճառ՝ վաշխառութեան և այլ սոյնանման կործանիչ դէպքերի գործունէութեան անկումը։ Բացի դրանից շատ գործեր, որոնց մասին գիւղացին նիւթական օգուտներ պատճառաւ մտածելն անգամ աւելորդ է համարում, բանկի շնորհիւ մատչելի են դառնում։ Օրինակի համար մի

որևէ կալուածատէր և կամ հողատէր ձեռնտու գնով վարձով է տալիս իւր հողը, այն պայմանով որ փողը վճարեն կանխիկ գարնան սկզբին։ Ո՞րտեղից կարող է գիւղացին մի այդպիսի ժամանակ մի կամ մի քանի հարիւր բուբ. ձեռք բերել։ Մեծ է օգուտը, բայց ի՞նչ կարող է անել. ստիպուած կամ պէտք է ձեռքերը ծալած յետ քաշուի և կամ վեր առնի աւելի թանկ գնով, որպէս զի հողատէրը համաձայնի հողագինը ստանալ աշնանը։ Այսպիսի հանգամանքներում բանկը դարձեալ կարող է օգնութեան հասնել։ Հէնց գարնան սկզբներին գիւղացիք կարող են ստանալ անհրաժեշտ գումարը շատ չնչին տոկոսներով, կէս տարուայ համար ամենաշատը մանէթին չորս կոպ., որը իրրև խնայողութիւն կաւելանայ բանկի հիմնական գրամագլխի վերայ։ Այսպիսով կօգտուեն թէ իրանք գիւղացիք, թէ հողատէրը և թէ բանկը։

Չպէտք է ասել, որ հազար բուբլին մի չնչին գումար է, ուրեմն և չի կարող բանկի համար ծառայել իրրև մի հիմնական գրամագլուխ և կամ ասել թէ այդ չնչին գումարը կարող է միայն փոքրիկ գործերի համար պէտք գալ։ Անդամների երաշխաւորութիւնը, որ համաձայնուել են բաց անել մի այդպիսի շահաւէտ հաստատութիւն, բաւական է նոքա կարևոր դէպքերում օգնութեան կգիմեն մեծ քաղաքների բանկերին, որոնք առանց մերժելու բաւականութիւն կուան այդպիսի հաստատութեան պահանջներին։ Բանկի միւս օգուտն էլ այն է, որ գիւղացու համար աւելի ձեռնտու է աւելորդ փողերը գիւղական բանկին յանձնելը, քան խնայողական գանձարանը, որովհետև այնտեղից աւելի մեծ տոկոս կարելի է ստանալ, բացի դրանից մատչելի է գիւղացուն և շահաւէտ իւրեանց բանկի համար։

Բանկի գոյութիւնը գիւղում ոչ միայն օգտակար, այլ նաև ամենաձեռնտու հաստատութիւն է պահեստի գրամագլխի գործածութեան համար։ Խնայողական գանձարանը հազար բուբլու համար տարեկան իրրև տոկոս կարող է տալ ընկերութեանը ընդամենը 35 բուբ., բայց եթէ այդ նոյն գումարը գործադրենք գիւղական բանկում, իւրաքանչիւր բուբլուն 15—20 կոպ. օգուտ հաշուելով, շահուել կարելի է 150—200 բուբ.։ Ահա այսպիսի եկամուտ ունին Նորվեգիայի բոլոր գիւղական բանկերը։ Մնում է միայն, որ բանկի կառավարիչը լինի փորձուած, հմուտ և հաւատարիմ անձն։ Նոքա ընտրութեանը մասնակցում է նաև կառավարութիւնը, որը արիւն աչքով միշտ հսկում է բանկի գործերի վերայ և նպաստում նոքա այս կամ այն գործունէութեան յառաջադիմութեանը։

Սոյնանման ընկերութիւններ և բանկեր կարելի է հիմնել և մեզանում։ Մնում է, որ գիւղացիք իրանք հասկանան նոցա տուած օգուտները և չընդդիմանան, ինչպէս սովորաբար նկատուում է ամէն մի նորութիւն ներմուծուելիս և առանց խնայելու իւրեանց մի քանի կոպէկները ձեռնամուխ լինեն այդպիսի շահաւէտ գործի։

Վերջացնելով մեր խօսքերը փոխադարձ օգնող ընկերութեան մասին, կրկնում ենք, որ մեծ է նոքա հասցրած օգուտները գիւղական հասարակութեան համար և չպէտք է խնայել ամսական մի քանի կոպէկ զոհելու մի այդպիսի վեհ գործի։ Այո՛, պատահում են և այնպիսի անհեռատես, նոյն իսկ ներուի մեզ ասել, անմիտ մարդիկ, որոնք կարծում են, թէ այլոց թշուառութիւնները չեն կարող իրենց բարեկեցութիւնը և երջանկութիւնը խանգարել։ Ողորմելիները այսչափը գոնէ չեն ըմբռնել, որ ընդհանուրի բարօրութեան երաշխաւորութիւնը փոխադարձ օգնութեան մէջն է կայանում։

Գ. Ղ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Աշխարհիս ամենափոքր տերութիւններ։—„Rundschau für Geographie und Statistik“ թերթի մէջ ուշադրութեան արժանի տեղեկութիւններ ենք գտնում հետևեալ երկու ամենափոքր տերութիւնների, այն է St. Kilde-ի և Houst-ի մասին, որոնց գոյութիւնը, շատ հաւանական է, թէ քչերին յայտնի կլինի, թէև նրանցից մէկը, St. Kilde-ն (Ատլանտեան ովկիանոսում, Հեբրիտեան կղզիներից դէպի արևմուտք) մինչև անգամ իրրև իսկական թագաւորութիւն է ներկայանում։ Նրա բռնած տարածութիւնը իսկութեամբ յայտնի չէ, սակայն հաւանական են համարում, որ երկու քառ. հազարամետրից աւելի չի լինիլ (մօտ 2 քառ. վերստ)։ Այս փոքրիկ տերութիւնն իր բազմամարդութեամբն էլ աչքի չի ընկնում և ոչ իսկ մի յայտնի քաղաք ունի։ Սրա բնակիչները մի քանի հարիւր ձկնորսներ են, որոնք կղզու այս ու այն կողմն են ցրուած. իսկ նրանց թագուհին բնակուում է մի այնպիսի շինութեան մէջ, որն ոչնչով չի զանազանուում կղզու միւս հասարակ շէնքերից։ Թագուհին որոշ արքայական տոհմի չի պատկանում, այլ ընտրում է տեղացի աղջիկներից և կառավարում է երկիրը մինչև իր ամուսնանալը։ Դրանից յետոյ նա ընդ միշտ կորցնում է իր իշխանութիւնը և նոր ընտրութիւն է նշանակուում։ Տղամարդիկ գահ բարձրանալու իրաւունք չունին։ այդպէս է պահանջում St. Kilde-ի օրէնքը, որն իր ոյժն չի կորցրել անյիշատակ ժամանակներից մինչև օրս, որովհետև St. Kilde միշտ էլ անկախ ու ազատ տերութիւն է եղել։